

Ն Շ Խ Ա Ր Ք Տ Ա Ր Օ Ն Ո Յ

(Շար. Յուն.-Փետրուարի թիւնն եւ վերջ)

105

ԽԱԶՔԱՐ

Արեւելեան մեծ գերեզմանատան մէջ, ամենահին խաչքարի արձանագրութիւնը. «*ԹՎին ճԿԶ (166+551=717) Քուլազն յիշեցէք ի Քրիստոս*»:

106

ԽԱԶՔԱՐ

«*ՈՒԴ (623+551=1174) ԹՎիս, ես Խոնիկոս խազմեցի զխաչս եւ կոնդնեցի*»:

107

ԽԱԶՔԱՐ

Արեւելեան մեծ գերեզմանատան մէջ, խաչքարի մը վրայ. «*Յամի ՈՒԴ (624+551=1175) ես Յայհիկ (Հայկ) սոր (սուր, պարիսպ) կանգնեցի բարեխաւութիւն ինձ եւ ծնողաց իմոյ եւ եղբաւր իմոյ, որք կարգայք յիշեցէք*»:

108

ԽԱԶՔԱՐ

Դարձեալ նոյն գերեզմանատան մէջ, ուրիշ խաչքարի մը վրայ. «*ՈՒԴ (624+551=1175) ԹՎիս եւ Հայրապետ երէց կանգնեցի զխաչս ի բարեխաւսութիւն որդոյ իմոյ Ամզէրոսի անարատ սարկաւազի. որք երկիրպապանէք իշեցէք ի Քրիստոս*»:

109

ԽԱԶՔԱՐ

«*Սուրբ Դանիէլ»* կոչուած գերեզմանատան մէջ խաչքարի մը վրայ. «*ՈՒԴ (625+551=1176) ԹՎիս կանգնեցաւ խաչս բարեխաւսութիւն մեծրկայս եւ ծնողաց իւրոյ, յորք տեսանէք, յիշեցէք ի Քրիստոս սարկաւազ ... որ կազմեց մեղաց թողութիւն»*:

110

ԽԱԶՔԱՐ

Նոյն գերեզմանատան մէջ, դարձեալ ուրիշ խաչքարի մը վրայ. «*ՈՒԶ (626+551=1177) ԹՎիս կանգնեցաւ խաչս տիկնանց տիկնայ»*: Այս խաչքարը կը գտնուի Սուրբ Դանիէլի մատուռին քով:

111

ԽԱԶՔԱՐ

Ուրիշ խաչարձանի մը յիշատակարանը. «*ՈՒԽ (647+551=1198) կանդնեցաւ խաչս բարեխաւսութիւն Վարդին. յիշեցէք ի Քրիստոս*»:

112

ԽԱԶՔԱՐ

Արեւելեան կողմի գերեզմանատան մէջ՝ այլ խաչարձանի մը յիշատակարանն է. «ԹՎին ԶՀԳ (773+551=1324) ես խաչիկ ... կանգնեցի խաչս մեր-նողին ... Փանոսին, որք կարդայք յիշեցէք»: Այս խաչարք օրօրոցաճել է եւ կողի վրայ պառկած:

113

ԽԱԶՔԱՐ

Նոյն գերեզմանատան մէջ դարձեալ. «Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ողորմի Դանիէլին, ԹՎին ԶՀԶ (776+551=1327), ես Քուքեր կանգնեցի զխաչ, ի բարեխաւսութիւն եղբաւր իմոյ Դանիէլի. յիշեցէք ի Քրիստոս»:

114

ԽԱԶՔԱՐ

Սուրբ Սարգիս եկեղեցւոյ բակին մէջ գտնուած խաչարքի յիշատակաւրանն է. «Յիշեցէք ի Քրիստոս զԱրրաՀամ Հօրն Նուրպէկ. ԹՎին ՌՃԳ (1103+551=1654)»:

115

ԽԱԶՔԱՐ

Արեւելեան գերեզմանատան մէջ. «Կանգնեցի սուրբ Նշանս բարեխաւսութիւն որդոյ իմ աւղբանկայ, որ կոչի անուն Ռոգի Սէր Արդմբ ժեծ պարոն եւ յուժ գեղեցիկ երեսաւք, վայելուք ջանիւք»:

ՄՈՒՇ. ՎԵՐԻ ԱԿՆԵՐ ԳԻՒՂ

116

ՏԱՊԱՆԱՔԱՐ

Ակնեքու վերեւ գտնուած գերեզմանատան մէջ, փոքր գերեզմանաւարի մը վրայ. «ՌժԴ (614+551=1165) ճարկանս է սուրբ Նշանս»:

117

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Սուրբ Գէորգ եկեղեցւոյ սեղանի առջեւ. «ՈՅ (650+551=1201) կանգնեցաւ սուրբ Նշանս բարեխաւս...»:

118

ԽԱԶՔԱՐ

Պարապապատ գերեզմանատան մէջ, խաչարքի մը վրայ. «ԹՎին ՌԿԴ (663+551=1214) կանգնեցաւ սուրբ Նշանս ի բարեխաւսութիւն»:

ՄՈՒՇ. ԹՈՆԴՐԱԿ ԳԻՒՂ

119

ԽԱԶՔԱՐ

Գերեզմանատան մէջ. «ԹՎին ԶԿԸ (768+551=1319) ևս Սարգիս Կանդ-
նեցի ի բարեխաւսութիւն եղբաւր իմոյ Յոհաննիսին. յիշեցէք ի Քրիստոս»:

120

ԽԱԶՔԱՐ

Գերեզմանատան մէջ, խաչքարի մը վրայ. «ԹՎին ԶՀԸ (778+551=
1329) փոխեցաւ ի Քրիստոս Սարգիս Մարդասայ որդի երեսասարդ ով և զ-
բարբ»:

Այս խաչքարին վրայ միայն տեսայ յաւանդէմ գրութիւն, հայերէն յի-
շատակարանէն վեր:

121

ԽԱԶՔԱՐ

Դարձեալ գերեզմանատան մէջ, խաչքարի մը վրայ. «ԹՎին ԶԶԹ (789
+551=1340) Կենսակիր խաչս Յիսուսի յաղթող նշանս Քրիստոսի զաւրեղ
րժիշկ յեկեղեցի եւ պարծանք ամենայն հաւատացելոց ազգի...»:

122

ՏԱՊԱՆԱՔԱՐ

«ԹՎին ԶՂԲ (792+551=1343) զԹուռօն յիշեցէք երեսասարդ փոխե-
ցաւ ի Քրիստոս Աստուած ողորմի ասացէք»:

123

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. Աստուածածին եկեղեցւոյ ճակատի յիշատակարանն է. «Կամօք եւ
ողորմութեամբ Աստուծոյ շինեցաւ տուրք եկեղեցիս ՌՃԿ (1160+551
=1711)»:

124

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Եկեղեցւոյ պատին վրայ. «ՌՃԿԸ (1168+551=1719) Տէր Սիմէոն յի-
շեցէք ի Քրիստոս»:

Յիշատակարանն ունեցող խաչքարերը բազմաթիւ էին, բայց շէխերու
Ֆէռաներու կերտումներուն վրայ՝ հարկադրուեցայ կարն կապել խուզար-
կութիւններու:

ՄՈՒՇ. ՌՍՏԱՄԳԷՏՈՒԿ ԳԻՒՂ

125

ԽԱԶՔԱՐ

Գերեզմանատան մէջ խաչքարի մը վրայ. «ՈՒՆ (635+551=1186) ԵՍ ԷՐՆԵԿԱ ԱՎՐԱՄԻ ՈՐՂԻ ԿԱՆՂՆԵՂԻ ԲԱՐԵԽԱՆՈՒԹԻՆ ԻՆՃ ԵՆ ԾՆՈՂԱՅ ԻՄՈՅ. ՈՐՔ ՄԵՍԱՆՔԷ ԴԻՆԵՔԷ Ի ՔՐԻՍՏՈՍ ԵՆ ԿԵՆԱԿՅԻՆ ԻՄՈՅ ՆԱՊԿԱՆ ԵՆ ԻԼԵՐ...»:

ՄՈՒՇ. ԳՕԹԱՆՆՈՒ ԳԻՒՂ

126

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Գօթաճուայ եկեղեցւոյ սեղանաքարի արձանագրութիւնն է. «Ի ԹՎԻՍ ՈԿԳ (663+551=1214) ԿԱՆՂՆԵՂԱՆ ՍՈՒՐՔ ՆՆԱՆՍ Ի ԲԱՐԵԽԱՆՈՒԹԻՆ ՔՐԻՍՏՈՍԱՄՈՒՐԻ ԴԻՆԵՔԷ Ի ՔՐԻՍՏՈՍ»:

ԻՄՆՕԹ. Գօթաճուի եկեղեցին կը կաշուէր Կարմիր Սուրբ Կարապետի վանք. որ շինուած է կիկլոպեան ժայռերով:

127

ԽԱԶՔԱՐ

Գերեզմանատան մէջ խաչքարի մը վրայ. «Ի ԹՎԻՍ ՈԿԳ (663+551=1214) ԵՍ ՅՈՎՍԵՄ ԶԱՆԱՆԱՆ ԿԱՆՂՆԵՂԱՆ Ի ՍՈՒՐՔ ՆՆԱՆՍ ԲԱՐԵԽԱՆԱՆ ՍՈ ՔՐԻՍՏՈՍ ՎԱՆ ՄԵՂԱՅ ՄԷՐՈՅ»:

ՄՈՒՇ. ՆՈՐԱՏԻՆ ԳԻՒՂ

128

ԽԱԶՔԱՐ

Յոհան Օմնեցւոյ մատրան քով գտնուած գերեզմանատան մէջ խաչքարի մը վրայ. «ՈՒՆ ԹՎԻՍ (640+551=1191) ԻՆՅԱՆՈՒԹԵԱՆ ՍԷՎԷՄԻՆ ԵՍ ՄԱՐԽԻՐՈՍ ՈՐ Է ՈՐՂԻ ՎԱՐՂԱՆԱ, ԿԱՆՂՆԵՂԻ ՂԱՍ ՎԷՄ ԵՆ ՄԱՐԺԱՆ ԱԿԱՎԱԿԱՆ ԵՆ ԸՆՏՐԵԱՂ ՆՆԱՆ ԵՂԹՈՒԹԵԱՆ, ՆԿԱՐԻԱՂ ԱՐԵՄԱՐՆ ՅԻՍՈՒՐ ՔՐԻՍՏՈՍԻ, Ի ՓՐԿՈՒԹԻՆ ԵՆ ԲԱՐԵԽԱՆՈՒԹԻՆ ԻՆՃ ԵՆ ԾՆՈՂԱՅ ԻՄՈՅ ԵՆ ԿԵՆԱԿՅԻՆ ԻՄՈՅ ՏԻՐԱՆՅԻ ԵՆ ԱՆՎԵՐԱՆԿԻ ԻՄՈՅ ՏԻՐԱՅՎԻ»:

129

ՏԱՊԱՆԱՔԱՐ

Նոյն գերեզմանատան մէջ, գերեզմանաքարի մը վրայ. «ԹՎԻՍ ՈՐԲ (652+551=1203) ԵՍ ՄԱՐԽԻՐՈՍ ԵՐԷՅ ԵՂԻ ՂՐՂԻ ... ԵՆ ՄԱՐԺԱՆ ԻՄՈՅ ԵՆ ԼՐԵՄ ԱՂԱՅ ... ԵՆ ՎԱՆԱՂԱՆ ԾԵՐՈՒԹԵԱՆ ԻՄՈՅ ԵՆ ՄԵԾ ԱՎԱՐԵԼ ԿԱՆՂՆԵՂԻ ՂԱՍ...»:

130

ԽԱԶՔԱՐ

Դարձեալ յիշեալ խաչքարի քով, նոյն գերեզմանատան մէջ. «ՈՅԳ (653+551=1204) ես Հայրապետս որդի Վարդանա կանգնեցի զկենսունակ եւ զկենդանատու նշանս զայս, կառուցեալ ահաւորութեան աջոյ անեղին Աստուծոյ եւ բարձրացեալ բանիւ որդոյ Միածնի եւ Հաստատեալ շնորհաւք Հոգւոյն Սրբոյ ի բարեխաւսութիւն ինձ եւ ծնողաց իմոց եւ կենակցի իմոց եղեկան եւ անդրանկի իմոյ...» :

131

ՏԱՊԱՆԱՔԱՐ

Արեւմտեան կողմի գերեզմանատան մէջ, գերեզմանաքարի մը վրայ. «Ի ՈՅԹ (659+551=1210) ԹՎին կանգնեցաւ խաչս ի բարեխաւսութիւն տիկնոջն Հռիփսիմէի» :

ՆԱԶԱՐԷԹ Գ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

(Շար. 3 եւ վերջ)

